Քամանչա



Քամանչան հայտնի է հայերին, թերևս, 8–13–րդ դարերից (վկայությունն են այդ դարերից մեզ հասած մանրանկարչության նմուշները):

Ժողովրդական լարային աղեղնավոր նվագարան է: Լայնորեն տարածված է Հարավային Կովկասում, Իրանում և հարևան այլ երկրներում: Նախապես ունեցել է 2 լար, ապա՝ 3:

Հարավային Կովկասում կենցաղավարող քամանչան 20–րդ դարի սկզբներից դարձել է քառալար (մետաղե). 4–րդ լարն ավելացրել և լարվածքը վերջնականապես հաստատել է հռչակավոր Ս. Օգանեզաշվիլին (Ալեքսանդր Օհանյան): Տարածված է հիմնականում քաղաքի երաժշտական կենցաղում:

Քամանչայի իրանը գնդաձև է: Կլոր կոթից իրանի միջով անցնում է մետաղե կապարաձող, որը նվագարանի համար ծառայում է որպես «ոտք»:

Նվագում են ծնկի վրա, ուղղաձիգ բռնած դիրքում և փայտե բարակ աղեղով՝ վրան ձիու պոչի մազեր ձգված:

Ունի նուրբ, ծորուն–երգեցիկ ձայն:

Աշուղների սիրելի նվագարաններից է. քամանչա է նվագել մեծն Սայաթ–Նովան: